Պոլսում (Ցաւել. Բ. 55) «ի թվին մերոյ. ՌՃՀԹ և ի մայիսի ամսոյ ԻԹ.», իսկ 1735 թուին մի խաչ նուիրում իւր հայրենի գիւղի վանքին. «Սուրբ Խաչս յիշատակ է Կուքեցի Առաքել վարդապետին և իւր ծնողացն, ի դուռն ս. Ռ.ափրկչին (Հազարափրկչին). թվ. ՌՃԶԴ»։ Այդ Խաչը մինչև վերջերս գտնւում էր Ապրակունեաց Ս. Կարապետի վանքում (*)։

Խաչիկ գիւղի մօտ մի ձիթահանի վերայ արձանագրուած է «Կուքեցի ուստայ Յովհաննէս նկարաքար», ըստ Ալիշանի (**) «ոչ ի վաղուց», բայց որքան հին, ասել չենք կարող, մեր նկատողութեան տետրակում ոչինչ նկատած չլինելով այդ մասին։

Շահապունեաց ձորի երկրորդ նշանաւոր կեդրոնն է Ոծոպի կամ Ածոպի վանքը, Օծոպի նոյնպէս կոչուած (պատկ. 17), որ մեր պատմական մատենագրութեան մէջ առաջին անգամ յիշատակւում է Օրբէլեանի կողմից հետևեալ դէպքի առթիւ. Սիւնեաց Ստեփանոս եպիսկոպոսը իւր «կամարակապ» խաչը պահ էր տուել «առ եպիսկոպոս մի յԱւծոպայ ի Շահապօնս Պետրոս անուն»։ Պռոշեանց տոհմի հիմնադիրը Վայոց ձորում՝ Վասակ Խաղբակեան իմանալով այդ, առնում է նրանից և դնում իւր շինած Կեչառուաց վանքում (***)։ ԺԴ. դարի առաջին քառորդում արդէն վանքը եպիսկոպոսանիստ էր. նոյնը տեսնում ենք և ԺԴ. դարի սկզբում, երբ Շմաւոն եպիսկոպոսը մասնակից եղաւ Սսոյ ժողովին (****)։ Բայց ներկայ շէնքը կառուցուած է ԺԶ. դարի երկրորդ կիսում. հարաւային պատի ճակատին միայն պահուած արձանագրութեան մնացորդներով երեք քար, որ յետոյ են այնտեղ հաստատել կորստից փրկելու համար. միջին քարի արձանագրութիւնը բոլորովին եղծուած է, ձախ քարի վերայ միայն տառեր և վանկեր են նկատւում, որոնցից հնարաւոր չէ միտք հանել. աջ կողմի քարի վերայ կարդացւում է. «(պատ)ար ադն տան մեր... / ր և թանկանն... / կատարիչքն աւրհն/ին յայ.։ Ի թվ. Զ.. (կարող է մի տառ լինել) գրեցաւ». ուրեմն առառաւելն ԺԴ. դարի երկրորդ կիսի մի յիշատակարան։ Կան և ուրիշ բազմաթիւ քարեր, նոյն իսկ քանդակներով և արձանագրութիւնների մնացորդներով, որոնք գործադրուած են ներկայ եկեղեցու շինութեան ժամանակ։

ԺԴ. դարի վերջերից ունինք մի կարևոր յիշատակարան Պռոշի որդի Ամիր-Հասան Ա.ի, վանքի եւ վանականութեան և ժամանակակից դէպքերի մասին. այդ յիշատակարանից արդէն մի անգամ օգտուել ենք Ամիր-Հասանի և այնտեղ յիշուած ուրիշ իշխանների մասին խօսելիս. «Եւ գրեցաւ տառս աստուածային ի գաւառիս Շահապունեաց, ի միաստանիս, որ է մերձ յամենաւրհնեալ և յաստուածապահ գեաւղս Ոծոպի կոչեցեալ»։ Տաճարը շինուած է Աստուածածնի անունով, իսկ սրբութիւններից յիշուած են Խոտակերաց և Խիկարաց սուրբ Նշանները։ Գրիչն է Շմաւոն ոմն, որ զարդարել է «ոսկւով և արծաթով, ոսկեգիծ դրուատով և ծաղկերանգ գոյնով (s!), և պաճուճեցի ներքոյ և արտաքոյ, ընտրեալ քարամբք պատուականաւք և լուսափայլ մարգարտօք»։ Աղքատութեան պատճառով երկարել է «առաւել քան զմետասան ամ» նիւթի պատրաստութիւնը, խնդրում է յիշատակել իւր ծնողներին՝ «զԻւանի և զՇահրազատն և զՀարազատն իմ զՈվանէս, որ ի ձեռն սրոյ ելաւ յաշխարհէս յազգէն Նետողաց»։ Յիշում է իւր հոգևոր որդեակ Ովանէս սարկաւագին, «նաև զդասս եղբայրութեան այսմ անապատի, զառաջնորդ սորա և զփակակալ, զծերսն և զմանկունս և զմիաբանեալսն յայսմ քաւարանի»(*)։ Այս վերջին խօսքերից երևում է, որ միաբանութիւնը եղել է բազմանդամ. արդեօք այս Շմաւոն գրիչն է, որ 1307 թուին մասնակցում է Սսոյ ժողովին, որպէս Ոծոպի եպիսկոպոս, հաւանական կարող է լինել։ Ոչ միայն յիշատակարանի կանոնաւոր շարադրութիւնը, այլ և ոտանաւոր միւս յիշատակարանը, որի տողերի սկզբնատառերը կազմում են «Շմաւոնի է աւետարանս այս» խօսքերը, ապացոյց են հեղինակի կարողութեան և պատրաստութեան։

ԺԴ. դարի կէսերին յիշւում է Մարգարէ Օծոպեցին, Եսայի Նչեցու աշակերտներից մէկը, որ ուրիշ ընկերների հետ անցաւ միաբարների կողմը և որի մասին յիշատակութիւն կ'ունենանք Գլաձորի դպրոցին կամ «համալսարանին» նուիրուած գլխի մէջ։ Քիչ յետոյ՝ 1462 թուին թաղուած է վանքի գերեզմանատանը Թարխանի որդի Մարտիրոսը. «Այս է տապան Թարխանի որդի Մարտիրոսին / ԹՃԺԱ»։

Այնուհետև ոչ վանքի և ոչ գիւղի մասին տեղեկութիւն չունինք մինչև ԺԵ. դարի կէսերը. ըստ Դաւրիժեցու Սարգիս Բ. և Յովհաննէս կաթողիկոսների ժամանակ(**) յաջողւում է Օծոպեցի Վրդանէս եպիսկոպոսին Լուսաւորչի աջը փախցնել Աղթամարից և Էջմիածին բերել ՋԻԶ (= 1477) թուականին մօտաւորապէս. իբրև վարձատրութիւն Վրդանէս նշանակուեցաւ մինչև մահ կաթուղիկոսների աթոռակալ, իսկ

(*) Սմբատեան, երնջակ, եր. 80։
(**) Սիսական, եր. 172։
(***) Օրբէլեան, 352։
(****) Չամչեան, III. 310։

(*) Յիշատակարանը տպուած է Արարատ. 1876, 413, նաև ուրիշ տեղեկութիւններով Ջեռագրի մասին։ Մի յիշատակարանից, գրուած ՋԾԴ (= 1504) թուին երևում է, որ Ջեռագիրը մի ժամանակ սեպհականութիւն էր եղիշէ եպիսկոպոսի, որ հազար դեկանով ծախել է Խոջայ Հազարբէկին։ Այս Եղիշէն ծագումով Օրբէլեան էր և Պռոշեան Յովհաննէս եպիսկոպոսի հոգևոր եղբայրը (Խաղբ. Ա. 235)։

(**) Դաւրիժեցի. Բ. տպ. Էջմիածին. 1896. 427 և շար.։ Այս կաթողիկոսների ժամանակագրութիւնը կարօտ է սրբագրութեան, որ մասամբ կատարել ենք «Սևանի Առաքելոց հարաւային դուռը» ուսումնասիրութեան մէջ (Անահիտ. 1932. թ. 5-6) և լրացնելու ենք առանձին յօդուածով։